**Հայաստանի Հանրապետությունում աճեցված տոհմային ԽԵԿ ձեռք բերելու համար 2% տոկոսադրույքով, ներկրված ԽԵԿ ձեռք բերելու համար՝ 3 % տոկոսադրույքով, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված սահմանամերձ համայնքների (այսուհետ՝ սահմանամերձ համայնքներ) տնտեսավարողներին կամ գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող կոոպերատիվներին (այսուհետ՝ Կոոպերատիվ)՝ 0% տոկոսադրույքով,*

***Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերին և գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող կոոպերատիվներին՝ 0 % տոկոսադրույքով,*

****Վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որ շահառուներին վարկը տրամադրվի 5% տոկոսադրույքով, առանց այգեհիմնման ոռոգման արդիական համակարգերի ներդրման կամ ջրավազանների կառուցման կամ ընդլայնման համար՝ 2% տոկոսադրույքով, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի տնտեսավարողներին, գյուղատնտեսական կոոպերատիվներին, զինվորական ծառայության պարտականությունների կատարման ժամանակ մարտական հերթապահության կամ գործողությունների իրականացման արդյունքում հաշմանդամ դարձած քաղաքացիներին, գյուղատնտեսությունում տնտեսավարող երիտասարդներին (18-35 տարեկանը չլրացած ֆիզիկական անձանց (վարկային պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահին), այգեհիմնման և (կամ) ոռոգման արդիական համակարգերի ներդրման դեպքում նաև գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում (գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներով համայնքների ցանկն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2007 թվականի ապրիլի 2–ի N 18-Ա և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2007 թվականի ապրիլի 2–ի N 77-Ա համատեղ հրամանով հաստատված «Գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման նորմաներն ու ռեժիմները Հայաստանի Հանրապետության ոռոգելի հողատարածքների համարե ձեռնարկում) ներդրողներին՝ 0% տոկոսադրույքով,*

*****Զինվորական ծառայության պարտականությունների կատարման ժամանակ մարտական հերթապահության կամ գործողությունների իրականացման արդյունքում հաշմանդամ դարձած քաղաքացիների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերում գործունեության իրականացնող տնտեսավարողներին՝ 0% տոկոսադրույքով,*

*****3-րդ և 4-րդ կետերով վարկերի տրամադրման նվազագույն գումարը կարող է պակաս լինել 5,000,001 ՀՀ դրամից, պայմանով, որ տրամադրվող վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը չի գերազանցի 14%:*

Ուշադրություն.Որպես վարկի լրացուցիչ ապահովման միջոց Բանկը կարող է պահանջել նաև այլ անձի/անձանց երաշխավորությունը(ները):
Ուշադրություն.Վարկի վաղաժամկետ մարում թույլատրվում է, որի համար տույժեր և տուգանքներ չեն կիրառվում:
Ուշադրություն. Տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ:
Ուշադրություն: Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:
Ուշադրություն: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք է հանդիսացել 06.07.2021թ-ի դրությամբ ԿԲ-ի կողմից հրապարակված ԱՄՆ դոլարի (1USD = 495.59 AMD) և Եվրոյի (1 EUR = 586.68 AMD) փոխարժեքները: Տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել՝ կախված ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից:
Ուշադրություն: Վարկ ստանալու համար դիմելիս Բանկը Ձեզ տրամադրում է սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում ներկայացված է Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները:
(մինչև 5.000.000 ՀՀ դրամը ներառյալ կամ համարժեք արտարժույթով տրամադրվող վարկերի դեպքում)
Ուշադրություն. Վարկային գործառնությունների իրականացման շրջանակներում մատուցվող լրացուցիչ ծառայությունների սակագներին կարող եք ծանոթանալ անցնելով հետևյալ հղմամբ՝ https://aeb.am/media/2020/04/3717.pdf

ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՎԱՐԿ

Վարկի նպատակը	Արևային էլեկտրակայանների և արևային ջրատաքացուցիչների ձեռքբերում
Վարկի տեսակը	Առևտրային
Վարկի արժույթը	ՀՀ դրամ
Վարկի գումարը	Նվազագույնը՝1.000.000 ՀՀ դրամ • Առավելագույնը 80.000.000 ՀՀ դրամ՝ արևային ջրատաքացուցիչների և մինչև 150 կվ դրվածքային հզորությամբ արևային էլեկտրակայանների ֆինանսավորման համար • Առավելագույնը 200.000.000 ՀՀ դրամ, բայց ոչ ավել քան նախագծի ընդհանուր արժեքի 80%-ը՝ 150կվ-500կվ դրվածքային հզորությամբ արևային էլեկտրակայանների ֆինանսավորման համար
Տարեկան տոկոսադրույքը	8.5% *Փաստացի տոկոսադրույքը*՝ 9.32-18.43% (մինչև 5 մլն ՀՀ դրամ վարկերի դեպքում)
Կոմիսիոն վճար	Չի սահմանվում
Կանխիկացման վճար	Վարկի գումարի կանխիկացման դեպքում, գանձվում է կանխիկացման վճար՝համաձայն բանկում գործող սակագների:
Վարկի ժամկետը	24-120 ամիս
Մարումների հաճախականությունը և մարման կարգը	Ամսական, ամենամսյա՝ հավասարաչափ (անուիտետային) կամ ոչ հավասարաչափ (դիֆերենցված)
Ապահովվածությունը	Շարժական կամ անշարժ գույք, Բանկի կողմից ընդունելի այլ ապահովման միջոցներ
Վարկ հարաբերած գրավի արժեքը	Վարկ/գրավ հարաբերակցությունը առավելագույնը՝ 80%
Տրամադրման եղանակը	Անկանխիկ (գումարը փոխանցվում է ընթացիկ հաշվին և կարող է կանխիկացվել)
Ապահովագրություն	• Անշարժ գույքի ապահովագրությունը կատարվում է հաճախորդի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լիցենզիա ունեցող և Բանկի հետ համագործակցող գնահատող կազմակերպության կողմից՝ վերջինիս սակագնով, որի միջակայքը տատանվում է 0.15-0.2%՝ կախված գրավի տեսակից: • Ավտոմեքենայի ապահովագրությունը կատարվում հաճախորդի հաշվին՝ ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզիա ունեցող ապահովագրական ընկերության կողմից՝ վերջինիս կողմից սահմանված սակագնով: Սակագները տատանվում են վարկի պայմանագրային գումարի 2.5-3% -ի չափով: Ապահովագրության համար հիմք է ընդունվում նվազագույնը վարկի գումարը, առավելագույնը գրավի գնահատված արժեքը:

Գրավադրվող գույքի գնահատումը	ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լիցենզիա ունեցող և Բանկի հետ համագործակցող գնահատող կազմակերպության կողմից՝ վերջինիս սակագնով, որի միջակայքը տատանվում է՝ • Ավտոմեքենայի դեպքում՝ 15.000-20.000 ՀՀ դրամ, • Անշարժ գույքի դեպքում՝ 20.000-200.000 ՀՀ դրամ:
Գրավի ձևակերպման հետ կապված ծախսեր	Գրավի ձևակերպման հետ կապված բոլոր ծախսերը (նոտարական վավերացում, անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումներում գրանցում) կատարվում են վարկառուի կողմից՝ • Ավտոմեքենայի գրավի դեպքում նոտարական վճար՝ 12000 ՀՀ դրամ, • ՀՀ Ոստիկանության վճար (արգելանքի և շարժական գույքի գրավադրման համար) միանվագ՝ 5.000 ՀՀ դրամ: • Անշարժ գույքի գրավի դեպքում նոտարական վճար՝ 15.000 ՀՀ դրամ, • Միասնական տեղեկանք (անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ)՝ 10.000 ՀՀ դրամ, • անշարժ գույքի գրավի իրավունքի գրանցման վկայական՝ 27.000 ՀՀ դրամ:
Վարկի ձևակերպումն իրականացվում է	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» Գլխամասային Գրասենյակի և մասնաճյուղերի կողմից: **Բացառությամբ Նաիրի ԲԿ, Ռոսիա-1 և Արաբատյան մասնաճյուղերի:**
Որոշման և տրամադրման ժամանակահատվածը	Խոշոր վարկերի համար՝ մինչև 25 աշխատանքային օր, Միջին, Փոքր և միկրո վարկեր համար մինչև 20 աշխատանքային օր, (գրավի դեպքում տրամադրվում է գրավի գրանցման իրավունքը ստանալուն հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում)
Վարկառուի նկատմամբ պահանջները	• Ռեզիդենտ անհատ ձեռնարկատեր անձ • Ռեզիդենտ իրավաբանական անձ
Տույժեր	Պայմանագրով սահմանված ժամկետ/ներ/ում չվճարված գումարների (վարկ, տոկոս, այլ վճարներ) ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար սահմանվում է տույժ ժամկետանց գումարի 0.13 տոկոսի չափով (օրական):
Քաղվածքի տրամադրում	Մինչև 1 ամիս կատարված գործարքների վերաբերյալ՝ անվճար 1-ից մինչև 3 ամիս՝ 1.500 դրամ 3-ից մինչև 12 ամիս՝ 2.500 դրամ 12 ամսից ավել՝ 5.000 դրամ
Դրական որոշման հիմքերը	• Դրական վարկային պատմություն (առկայության դեպքում), • Ներկայացված փաստաթղթերի արժանահավատություն, • Հաճախորդի ֆինանսական դրության վերլուծության դրական գնահատական • Բանկի կողմից ընդունելի գրավի և/կամ երաշխավորության առկայություն:
Բացասական որոշման հիմքերը	• Հաճախորդի ֆինանսական դրության վերլուծության բացասական գնահատական, • Ներկայացվող ծրագրի անբավարար շահութաբերություն, վարկի օգտագործման նպատակների թերհիմնավորում, • Ներկայացված փաստաթղթերի անարժանահավատություն, • Վարկի ապահովության անբավարար իրացվելիությունը, • Սահմանված ժամկետներում պահանջվող փաստաթղթերի չներկայացում, • Հաճախորդի գործունեությունից շրջակա միջավայրի աղտոտումը կամ վնասումը, • Հաճախորդի բացասական վարկային պատմությունը, • Այլ պատճառներ, որոնք Բանկի գնահատմամբ կխոչընդոտեն վարկի մարմանը:
Իրավաբանական անձանց կողմից ներկայացվող փաստաթղթերը	1. Պետ. ռեգիստրի վկայականը (պատճեն) տնօրենի ներդիրը պարտադիր է կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք (տվյալ փաստաթուղթը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով), 2. Տեղեկանք պետ. ռեգիստրից մասնակիցների վերաբերյալ, տնօրենի և կանոնադրության փոփոխության վերաբերյալ կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք (տվյալ փաստաթուղթը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով): Բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ տեղեկանք (քաղվածք) «Հայաստանի

	կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ կանոնների համաձայն՝ հաշվի օպերատոր հանդիսացող կազմակերպությունից բաժնետերերի վերաբերյալ և տեղեկանք պետ. ռեգիստրից տնօրենի և կանոնադրության փոփոխության վերաբերյալ կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք (պետական ռեգիստորի տեղեկանքը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով), 2.կետով սահմանված տեղեկատվությունը չի պահանջվում այն իրավաբանական անձանց դեպքում, երբ վարկի ստացման որոշումը իրավաբանական անձի կանոնադրության համաձայն կարող է կայացվել տնօրենի կողմից, 3. Կանոնադրություն (վերագրանցված) քաղվածք (տվյալ փաստաթուղթը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով), 4. Իրավասու մարմնի որոշումը գույքը գրավ դնելու և վարկ ստանալու վերաբերյալ, անհրաժեշտ է 2-րդ կետով սահմանված տեղեկատվությունը պահանջվելու դեպքում, 5. Ֆինանսական հաշվետվությունների փաթեթ՝ վերջին հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ: Անհրաժեշտության դեպքում հաստատված (կնքված կամ դրոշմակնքված) համապատասխան հարկային մարմնի կողմից (պատճեն), 6. Տեղեկանք բյուջեի հանդեպ ներկա պարտավորությունների վերաբերյալ (պարտադիր է՝ 10 մլն. ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթի գումարից ավելի վարկի դեպքում), 7. Հիմնական միջոցների ցանկը (անհրաժեշտության դեպքում), 8. Հարկային կոդ (պատճեն), ՀՎՀՀ, 9. Արտոնագրեր (առկայության դեպքում), (պատճեն), 10. Անձնագրի (պատճեն), 11. Վարկի ապահովություն հանդիսացող գրավի սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր, 12. Ամուսնության (ամուսնալուծության, մահվան) վկայականի (պատճեն)՝ եթե գրավադրվող գույքը հանդիսանում է ֆիզիկական անձի սեփականություն, 13. Բանկային հաշվից քաղվածք (անհրաժեշոտության դեպքում), 14. Տեղեկանք դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում վերծանված), 15. Շինարարության, ջրօգտագործման և այլ անհրաժեշտ թույլտվությունների պատճեններ, 16.Գերմանահայկական հիմնադրամի «Վերականգնվող էներգիայի զարգացման» ծրագրի ֆինանասական և տեխնիկական խորհրդատուների եզրակացությունը, 17..Տեղեկանք անշարժ գույքի կադաստրի վարչությունից արգելանքի վերաբերյալ (վարկի տրամադրման որոշումը կայացնելուց հետո): 18.Ըստ անհրաժեշտության այլ փաստաթղթեր:
Անհատ ձեռներեցների կողմից ներկայացվող փաստաթղթերը	1. Պետ. ռեգիստրի վկայականը (պատճեն) տնօրենի ներդիրը պարտադիր է կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք (տվյալ փաստաթուղթը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով), 2. Հարկային կոդ (պատճեն), ՀՎՀՀ, 3. Ֆինանսական հաշվետվությունների փաթեթ՝ վերջին հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ: Անհրաժեշտության դեպքում հաստատված (կնքված կամ դրոշմակնքված) համապատասխան հարկային մարմնի կողմից (պատճեն), 4. Տեղեկանք բյուջեի հանդեպ ներկա պարտավորությունների վերաբերյալ (պարտադիր է՝ 10 մլն. ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթի գումարից ավելի վարկի դեպքում), 5. Արտոնագրեր (առկայության դեպքում), (պատճեն), 6. Անձնագրի (պատճեն),

	7. Վարկի ապահովություն հանդիսացող գրավի սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր, 8. Ամուսնության (ամուսնալուծության, մահվան) վկայականի (պատճեն)՝ եթե գրավադրվող գույքը հանդիսանում է ֆիզիկական անձի սեփականություն, 9. Բանկային հաշվից քաղվածք (անհրաժեշտության դեպքում), 10. Տեղեկանք դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում վերծանված), 11. Շինարարության, շրջօգտագործման և այլ անհրաժեշտ թույլտվությունների պատճեններ, 12. Գերմանահայկական հիմնադրամի «Վերականգնվող էներգիայի զարգացման» ծրագրի ֆինանսական և տեխնիկական խորհրդատուների եզրակացությունը, 13.Տեղեկանք անշարժ գույքի կադաստրի վարչությունից արգելանքի վերաբերյալ (վարկի տրամադրման որոշումը կայացնելուց հետո): 14.Ըստ անհրաժեշտության այլ փաստաթղթեր:

*Բանկում գործող սակագներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://www.aeb.am/hy/business_cash/

Ուշադրություն. Գերփոքր առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին մինչև 5.000.000 ՀՀ դրամը ներառյալ տրամադրվող վարկերի վաղաժամկետ մարման դեպքում տույժեր չեն գանձվում:

Ուշադրություն. Առանց Բանկի գրավոր համաձայնության յուրաքանչյուր ամսվա ընթացքում տվյալ ամսվա առաջին օրվա դրությամբ վարկի մայր գումարի մնացորդի 20%-ից (որում չի ներառվում տվյալ ամսում մարման ժամանակացույցով նախատեսվող վարկիմասի մարումը) ավել գումար վաղաժամկետ մարելու դեպքում՝ հաշվարկվում է տուգանք այդ գումարի 5%-ի չափով:

Ուշադրություն.Որպես վարկի լրացուցիչ ապահովման միջոց Բանկը կարող է պահանջել նաև այլ անձի/անձանց երաշխավորությունը(ները):

Ուշադրություն. Տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ:

Ուշադրություն: Վարկ ստանալու համար դիմելիս Բանկը Ձեզ տրամադրում է սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում ներկայացված է Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները:
(մինչև 5.000.000 ՀՀ դրամը ներառյալ կամ համարժեք արտարժույթով տրամադրվող վարկերի դեպքում)

Ուշադրություն. Վարկային գործառնությունների իրականացման շրջանակներում մատուցվող լրացուցիչ ծառայությունների սակագներին կարող եք ծանոթանալ անցնելով հետևյալ հղմամբ՝ https://aeb.am/media/2020/04/3717.pdf

ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿ	
Վարկի նպատակը	Շրջանառու միջոցների համալրում (ներմուծում/արտահանում)
Վարկի տեսակը	Առևտրային
Վարկի արժույթը	ԱՄՆ դոլար, Եվրո /արտարժույթով վարկերի մարումների վրա կարող են ազդել փոխարժեքի տատանումները, որի ռիսկը կրում եք Դուք/
Վարկի գումարը	Նվազագույնը 12.000 ԱՄՆ դոլար կամ համարժեք եվրո Տրամադրվող վարկի առավելագույն գումարը պայմանավորված է՝ • Վարկի նպատակից, • Հաճախորդի վարկունակությունից, • Հաճախորդի կողմից առաջարկվող վարկի ապահովվածությունից, • Վարկային ռիսկի գնահատումից, • ՀՀ կենտրոնական բանկի կողմից և միջազգային պայմանագրերով սահմանված նորմատիվային դաշտի պահանջներից
Տարեկան տոկոսադրույքը	6.5%-9%
Վարկի ժամկետը	1-36 ամիս
Կոմիսիոն վճար	Չի սահմանվում
Մարումների հաճախականությունը և մարման կարգը	• Ամսական՝ հավասարաչափ (անուիտետային) կամ ոչ հավասարաչափ (դիֆերենցված) • Հնարավոր է սահմանել վարկի մարման ազատ գրաֆիկ՝ վարկավորվող գործունեության առանձնահատկություններից կախված
Ապահովվածությունը	Շարժական կամ անշարժ գույք, Բանկի կողմից ընդունելի այլ ապահովման

	միջոցներ
Վարկ հարաբերած գրավի արժեքը	առավելագույնը 80%
Տրամադրման եղանակը	Անկանխիկ
Ապահովագրություն	• Անշարժ գույքի ապահովագրությունը կատարվում է հաճախորդի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լիցենզիա ունեցող և Բանկի հետ համագործակցող գնահատող կազմակերպության կողմից՝ վերջինիս սակագնով, որի միջակայքը տատանվում է 0.15-0.2%՝ կախված գրավի տեսակից: • Ավտոմեքենայի ապահովագրությունը կատարվաում հաճախորդի հաշվին՝ ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզիա ունեցող ապահովագրական ընկերության կողմից՝ վերջինիս կողմից սահմանված սակագնով: Սակագները տատանվում են վարկի պայմանագրային գումարի 2.5-3% -ի չափով: Ապահովագրության համար հիմք է ընդունվում նվազագույնը վարկի գումարը, առավելագույնը գրավի գնահատված արժեքը:
Գրավադրվող գույքի գնահատումը	ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լիցենզիա ունեցող և Բանկի հետ համագործակցող գնահատող կազմակերպության կողմից՝ վերջինիս սակագնով, որի միջակայքը տատանվում է՝ • Ավտոմեքենայի դեպքում՝ 15.000-20.000 ՀՀ դրամ, • Անշարժ գույքի դեպքում՝ 20.000-200.000 ՀՀ դրամ:
Գրավի ձևակերպման հետ կապված ծախսեր	Գրավի ձևակերպման հետ կապված բոլոր ծախսերը (նոտարական վավերացում, անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումներում գրանցում) կատարվում են վարկառուի կողմից՝ • Ավտոմեքենայի գրավի դեպքում նոտարական վճար՝ 12.000 ՀՀ դրամ, • ՀՀ Ոստիկանության վճար (արգելանքի և շարժական գույքի գրավադրման համար) միանվագ՝ 5.000 ՀՀ դրամ: • Անշարժ գույքի գրավի դեպքում նոտարական վճար՝ 15.000 ՀՀ դրամ, • Միասնական տեղեկանք (անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ)՝ 10.000 ՀՀ դրամ, • անշարժ գույքի գրավի իրավունքի գրանցման վկայական՝ 27.000 ՀՀ դրամ:
Վարկի ձևակերպումն իրականացվում է	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» Գլխամասային Գրասենյակի և մասնաճյուղերի կողմից: **Բացառությամբ Նաիրի ԲԿ, Ռոսիա-1 և Արաբատյան մասնաճյուղերի:**
Որոշման և տրամադրման ժամանակահատվածը	Խոշոր վարկերի համար՝ մինչև 25 աշխատանքային օր, Միջին, Փոքր և միկրո վարկեր համար մինչև 20 աշխատանքային օր, (գրավի դեպքում տրամադրվում է գրավի գրանցման իրավունքը ստանալուն հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում)
Վարկառուի նկատմամբ պահանջները	• Ռեզիդենտ անհատ ձեռնարկատեր անձ • Ռեզիդենտ իրավաբանական անձ ***Գործունեության ժամկետը*** ✓ առևտրի դեպքում՝ նախորդող 3 ամսից ոչ պակաս, ✓ արտադրության և սպասարկման ոլորտի դեպքում՝ նախորդող 6 ամսից ոչ պակաս
Տույժեր	Պայմանագրով սահմանված ժամկետ/ներ/ում չվճարված գումարների (վարկ, տոկոս, այլ վճարներ) ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար սահմանվում է տույժ ժամկետանց գումարի 0.13 տոկոսի չափով (օրական):
Քաղվածքի տրամադրում	Մինչև 1 ամիս կատարված գործարքների վերաբերյալ՝ անվճար 1-ից մինչև 3 ամիս՝ 1.500 դրամ 3-ից մինչև 12 ամիս՝ 2.500 դրամ 12 ամսից ավել՝ 5.000 դրամ
Դրական որոշման հիմքերը	• Դրական վարկային պատմություն (առկայության դեպքում), • Ներկայացված փաստաթղթերի արժանահավատություն, • Հաճախորդի ֆինանսական դրության վերլուծության դրական գնահատական • Բանկի կողմից ընդունելի գրավի և/կամ երաշխավորության առկայություն:
Բացասական որոշման հիմքերը	• Հաճախորդի ֆինանսական դրության վերլուծության բացասական գնահատական, • Ներկայացվող ծրագրի անբավարար շահութաբերություն, վարկի օգտագործման նպատակների թերհիմնավորում,

	• Ներկայացված փաստաթղթերի անարժանահավատություն, • Վարկի ապահովության անբավարար իրացվելիությունը, • Սահմանված ժամկետներում պահանջվող փաստաթղթերի չներկայացում, • Հաճախորդի գործունեությունից շրջակա միջավայրի աղտոտումը կամ վնասումը, • Հաճախորդի բացասական վարկային պատմությունը, • Այլ պատճառներ, որոնք Բանկի գնահատմամբ կխոչընդոտեն վարկի մարմանը:
Իրավաբանական անձանց կողմից ներկայացվող փաստաթղթերը	1. Պետ. ռեգիստրի վկայականը (պատճեն) տնօրենի ներդիրը պարտադիր է կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք (տվյալ փաստաթուղթը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով), 2. Տեղեկանք պետ. ռեգիստրից մասնակիցների վերաբերյալ, տնօրենի և կանոնադրության փոփոխության վերաբերյալ կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք (տվյալ փաստաթուղթը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով): Բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ տեղեկանք (քաղվածք) «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ կանոնների համաձայն՝ հաշվի օպերատոր հանդիսացող կազմակերպությունից բաժնետերերի վերաբերյալ և տեղեկանք պետ. ռեգիստրից տնօրենի և կանոնադրության փոփոխության վերաբերյալ կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք (պետական ռեգիստորի տեղեկանքը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով), 2.կետով սահմանված տեղեկատվությունը չի պահանջվում այն իրավաբանական անձանց դեպքում, երբ վարկի ստացման որոշումը իրավաբանական անձի կանոնադրության համաձայն կարող է կայացվել տնօրենի կողմից, 3. Կանոնադրություն (վերագրանցված) քաղվածք (տվյալ փաստաթուղթը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով), 4. Իրավասու մարմնի որոշումը գույքը գրավ դնելու և վարկ ստանալու վերաբերյալ, անհրաժեշտ է 2-րդ կետով սահմանված տեղեկատվությունը պահանջվելու դեպքում, 5. Ֆինանսական հաշվետվությունների փաթեթ՝ վերջին հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ: Անհրաժեշտության դեպքում հաստատված (կնքված կամ դրոշմակնքված) համապատասխան հարկային մարմնի կողմից (պատճեն), 6. Տեղեկանք բյուջեի հանդեպ ներկա պարտավորությունների վերաբերյալ (պարտադիր է՝ 10 մլն. ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթի գումարից ավելի վարկի դեպքում), 7. Հիմնական միջոցների ցանկը (անհրաժեշտության դեպքում), 8. Հարկային կոդ (պատճեն), ՀՎՀՀ, 9. Արտոնագրեր (առկայության դեպքում), (պատճեն), 10. Անձնագրի (պատճեն), 11. Վարկի ապահովություն հանդիսացող գրավի սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր, 12. Ամուսնության (ամուսնալուծության, մահվան) վկայականի (պատճեն)՝ եթե գրավադրվող գույքը հանդիսանում է ֆիզիկական անձի սեփականություն, 13. Բանկային հաշվից քաղվածք (անհրաժեշոտթյան դեպքում), 14. Տեղեկանք դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում վերծանված), 15. Ներմուծվող ապրանքների համար մատակարարի հետ կնքված պայմանագրի պատճեն և ինվոյս 16.Տեղեկանք անշարժ գույքի կադաստրի վարչությունից արգելանքի վերաբերյալ (վարկի տրամադրման որոշումը կայացնելուց հետո): 17.Ըստ անհրաժեշտության այլ փաստաթղթեր:

Անհատ ձեռներեցների կողմից ներկայացվող փաստաթղթերը	1. Պետ. ռեգիստրի վկայականը (պատճեն) տնօրենի ներդիրը պարտադիր է կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք (տվյալ փաստաթուղթը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով), 2. Հարկային կոդ (պատճեն), ՀՎՀՀ, 3. Ֆինանսական հաշվետվությունների փաթեթ՝ վերջին հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ: Անհրաժեշտության դեպքում հաստատված (կնքված կամ դրոշմակնքված) համապատասխան հարկային մարմնի կողմից (պատճեն), 4. Տեղեկանք բյուջեի հանդեպ ներկա պարտավորությունների վերաբերյալ (պարտադիր է՝ 10 մլն. ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթի գումարից ավելի վարկի դեպքում), 5. Արտոնագրեր (առկայության դեպքում), (պատճեն), 6. Անձնագրի (պատճեն), 7. Վարկի ապահովություն հանդիսացող գրավի սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր, 8. Ամուսնության (ամուսնալուծության, մահվան) վկայականի (պատճեն)՝ եթե գրավադրվող գույքը հանդիսանում է ֆիզիկական անձի սեփականություն, 9. Բանկային հաշվից քաղվածք (անհրաժեշտության դեպքում), 10. Տեղեկանք դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում վերծանված), 11. Ներմուծվող ապրանքների համար մատակարարի հետ կնքված պայմանագրի պատճեն և ինվոյս 12.Տեղեկանք անշարժ գույքի կադաստրի վարչությունից արգելանքի վերաբերյալ (վարկի տրամադրման որոշումը կայացնելուց հետո): 13. Ըստ անհրաժեշտության այլ փաստաթղթեր:

Ուշադրություն. Առանց Բանկի գրավոր համաձայնության յուրաքանչյուր ամսվա ընթացքում տվյալ ամսվա առաջին օրվա դրությամբ վարկի մայր գումարի մնացորդի 20%-ից (որում չի ներառվում տվյալ ամսում մարման ժամանակացույցով նախատեսվող վարկիմասի մարումը) ավել գումար վաղաժամկետ մարելու դեպքում՝ հաշվարկվում է տուգանք այդ գումարի 5%-ի չափով:

Ուշադրություն.Որպես վարկի լրացուցիչ ապահովման միջոց Բանկը կարող է պահանջել նաև այլ անձի/անձանց երաշխավորությունը(ները):

Ուշադրություն. Տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ:

Ուշադրություն. Վարկային գործառնությունների իրականացման շրջանակներում մատուցվող լրացուցիչ ծառայությունների սակագներին կարող եք ծանոթանալ անցնելով հետևյալ հղմամբ՝ https://aeb.am/media/2020/04/3717.pdf

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿ

Վարկի նպատակը	Արտահանման ֆինանսավորում
Վարկի տեսակը	Առևտրային
Վարկի արժույթը	ԱՄՆ դոլար, Եվրո /արտարժույթով վարկերի մարումների վրա կարող են ազդել փոխարժեքի տատանումները, որի ռիսկը կրում եք Դուք/
Վարկի գումարը	Վարկի տրամադրման առավելագույն գումարը՝ արտահանման հաշիվ-ապրանքագրի 90%-ը, սակայն ոչ ավել քան ապահովագրական գումարը համապատասխան չհատուցվող գումարով նվազեցնելուց հետո: Նվազագույն վարկի գումարը՝ 1.000.000 ՀՀ դրամին համարժեք արտարժույթ:
Տարեկան տոկոսադրույքը	7%-9% Փաստացի տոկոսադրույքը՝ 7.45-14.57%
Վարկի ժամկետը	Տրամադրվող վարկի առավելագույն ժամկետը՝ դեբիտորական պարտքի

	մարման ժամկետ գումարած 180 օրացուցային օր, սակայն ոչ ավել քան 12 ամիս: Նվազագույն ժամկետը 6 ամիս:
Մարումների հաճախականությունը և մարման կարգը	Մայր գումարի վճարում ժամկետի վերջում, տոկոսագումարների վճար յուրաքանչյուր ամիս:
Ապահովվածությունը	• Դեբիտորական պարտքի (իրավունքի) գրավ • Հիմնադիրների երաշխավորություն
Վարկ հարաբերած գրավի արժեքը	առավելագույնը 90%
Տրամադրման եղանակը	Անկանխիկ
Կոմիսիոն վճար	Չի սահմանվում
Ապահովագրություն	Ապահովագրությունը կատարվում է <<Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն>> ԱՓԲԸ-ի կողմից: Սակագները տատանվում են արտահանման հաշիվ-ապրանքագրի 0.11%-2.66%-ի սահմաններում:
Վարկի ձևակերպումն իրականացվում է	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» Գլխամասային Գրասենյակի և մասնաճյուղերի կողմից: **Բացառությամբ Նաիրի ԲԿ, Ռոսիա-1 և Արաբատյան մասնաճյուղերի:**
Որոշման և տրամադրման ժամանակահատվածը	Խոշոր վարկերի համար՝ մինչև 25 աշխատանքային օր, Միջին, Փոքր և միկրո վարկեր համար մինչև 20 աշխատանքային օր, (գրավի դեպքում տրամադրվում է գրավի գրանցման իրավունքը ստանալուն հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում)
Տույժեր	Պայմանագրով սահմանված ժամկետ/ներ/ում չվճարված գումարների (վարկ, տոկոս, այլ վճարներ) ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար սահմանվում է տույժ ժամկետանց գումարի 0.13 տոկոսի չափով (օրական):
Քաղվածքի տրամադրում	Մինչև 1 ամիս կատարված գործարքների վերաբերյալ՝ անվճար 1-ից մինչև 3 ամիս՝ 1.500 դրամ 3-ից մինչև 12 ամիս՝ 2.500 դրամ 12 ամսից ավել՝ 5.000 դրամ
Դրական որոշման հիմքերը	• Դրական վարկային պատմություն (առկայության դեպքում), • Ներկայացված փաստաթղթերի արժանահավատություն, • Հաճախորդի ֆինանսական դրության վերլուծության դրական գնահատական • Բանկի կողմից ընդունելի գրավի և/կամ երաշխավորության առկայություն:
Վարկառուի նկատմամբ պահանջները	• Ռեզիդենտ անհատ ձեռնարկատեր անձ • Ռեզիդենտ իրավաբանական անձ ***Գործունեության ժամկետը*** ✓ առևտրի դեպքում՝ նախորդող 3 ամսից ոչ պակաս, ✓ արտադրության և սպասարկման ոլորտի դեպքում՝ նախորդող 6 ամսից ոչ պակաս:
Բացասական որոշման հիմքերը	• Հաճախորդի ֆինանսական դրության վերլուծության բացասական գնահատական, • Ներկայացվող ծրագրի անբավարար շահութաբերություն, վարկի օգտագործման նպատակների թերհիմնավորում, • Ներկայացված փաստաթղթերի անարժանահավատություն, • Վարկի ապահովության անբավարար իրացվելիությունը, • Սահմանված ժամկետներում պահանջվող փաստաթղթերի չներկայացում, • Հաճախորդի գործունեությունից շրջակա միջավայրի աղտոտումը կամ վնասումը, • Հաճախորդի բացասական վարկային պատմությունը, • Այլ պատճառներ, որոնք Բանկի գնահատմամբ կխոչընդոտեն վարկի մարմանը:
Իրավաբանական անձանց կողմից ներկայացվող փաստաթղթերը	1. Պետ. ռեգիստրի վկայականը (պատճեն) տնօրենի ներդիրը պարտադիր է կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք (տվյալ փաստաթուղթը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով), 2. Տեղեկանք պետ. ռեգիստրից մասնակիցների վերաբերյալ, տնօրենի և կանոնադրության փոփոխության վերաբերյալ կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք (տվյալ փաստաթուղթը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ

	տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով): Բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ տեղեկանք (քաղվածք) «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ կանոնների համաձայն՝ հաշվի օպերատոր հանդիսացող կազմակերպությունից բաժնետերերի վերաբերյալ և տեղեկանք պետ. ռեգիստրից տնօրենի և կանոնադրության փոփոխության վերաբերյալ կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք (պետական ռեգիստորի տեղեկանքը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով), 2.կետով սահմանված տեղեկատվությունը չի պահանջվում այն իրավաբանական անձանց դեպքում, երբ վարկի ստացման որոշումը իրավաբանական անձի կանոնադրության համաձայն կարող է կայացվել տնօրենի կողմից, 3. Կանոնադրություն (վերագրանցված) քաղվածք (տվյալ փաստաթուղթը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով), 4. Իրավասու մարմնի որոշումը գույքը գրավ դնելու և վարկ ստանալու վերաբերյալ, անհրաժեշտ է 2-րդ կետով սահմանված տեղեկատվությունը պահանջվելու դեպքում, 5. Ֆինանսական հաշվետվությունների փաթեթ՝ վերջին հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ: Անհրաժեշտության դեպքում հաստատված (կնքված կամ դրոշմակնքված) համապատասխան հարկային մարմնի կողմից (պատճեն), 6. Տեղեկանք բյուջեի հանդեպ ներկա պարտավորությունների վերաբերյալ (պարտադիր է՝ 10 մլն. ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթի գումարից ավելի վարկի դեպքում), 7. Հիմնական միջոցների ցանկը (անհրաժեշտության դեպքում), 8. Հարկային կոդ (պատճեն), ՀՎՀՀ, 9. Արտոնագրեր (առկայության դեպքում), (պատճեն), 10. Անձնագրի (պատճեն), 11. Ամուսնության (ամուսնալուծության, մահվան) վկայականի (պատճեն)՝ եթե գրավադրվող գույքը հանդիսանում է ֆիզիկական անձի սեփականություն, 12. Բանկային հաշվից քաղվածք (անհրաժեշոտթյան դեպքում), 13. Արտահանման հաշիվ-ապրանքագիր 14. Տեղեկանք դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում վերծանված), 15. <<Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն>> ԱՓԲԸ-ի կողմից տրված ապահովագրության վկայագիր: 16. Ըստ անհրաժեշտության այլ փաստաթղթեր:
Անհատ ձեռներեցների կողմից ներկայացվող փաստաթղթերը	1. Պետ. ռեգիստրի վկայականը (պատճեն) տնօրենի ներդիրը պարտադիր է կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք (տվյալ փաստաթուղթը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով), 2. Հարկային կոդ (պատճեն), ՀՎՀՀ, 3. Ֆինանսական հաշվետվությունների փաթեթ՝ վերջին հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ: Անհրաժեշտության դեպքում հաստատված (կնքված կամ դրոշմակնքված) համապատասխան հարկային մարմնի կողմից (պատճեն), 4. Տեղեկանք բյուջեի հանդեպ ներկա պարտավորությունների վերաբերյալ (պարտադիր է՝ 10 մլն. ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթի գումարից ավելի վարկի դեպքում), 5. Արտոնագրեր (առկայության դեպքում), (պատճեն), 6. Անձնագրի (պատճեն), 7. Ամուսնության (ամուսնալուծության, մահվան) վկայականի (պատճեն)՝ եթե գրավադրվող գույքը հանդիսանում է ֆիզիկական անձի սեփականություն, 8. Բանկային հաշվից քաղվածք (անհրաժեշոտթյան դեպքում), 9. Արտահանման հաշիվ-ապրանքագիր,

	10. Տեղեկանք դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում վերծանված), 11.<<Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն>> ԱՓԲԸ-ի կողմից տրված ապահովագրության վկայագիր: 12.Ըստ անհրաժեշտության այլ փաստաթղթեր:

Ուշադրություն.Որպես վարկի լրացուցիչ ապահովման միջոց Բանկը կարող է պահանջել նաև այլ անձի/անձանց երաշխավորությունը(ները):

Ուշադրություն.Վարկի վաղաժամկետ մարում թույլատրվում է, որի համար տույժեր և տուգանքներ չեն կիրառվում:

Ուշադրություն. Տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ:

Ուշադրություն: Վարկ ստանալու համար դիմելիս Բանկը Ձեզ տրամադրում է սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում ներկայացված է Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները:
(մինչև 5.000.000 ՀՀ դրամը ներառյալ կամ համարժեք արտարժույթով տրամադրվող վարկերի դեպքում)

Ուշադրություն: Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:

Ուշադրություն: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք է հանդիսացել 06.07.2021թ-ի դրությամբ ԿԲ-ի կողմից հրապարակված ԱՄՆ դոլարի (1USD = 495.59 AMD) և Եվրոյի (1 EUR = 586.68 AMD) փոխարժեքները: Տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել՝ կախված ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից:

Ուշադրություն. Վարկային գործառնությունների իրականացման շրջանակներում մատուցվող լրացուցիչ ծառայությունների սակագներին կարող եք ծանոթանալ անցնելով հետևյալ հղմամբ՝ https://aeb.am/media/2020/04/3717.pdf

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՎԱՐԿ(բանկային երաշխիքներ)/ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԵՐ

Վարկի նպատակը	Ձեռնարկատիրական գործունեության ընդլայման և զարգացման համար
Վարկի տեսակը	Առևտրային
Վարկի արժույթը	ՀՀ դրամ և արտարժույթ /արտարժույթով վարկերի մարումների վրա կարող են ազդել փոխարժեքի տատանումները, որի ռիսկը կրում եք Դուք/
Վարկի գումարը	Նվազագույն գումարը՝10.000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ Տրամադրվող վարկի առավելագույն գումարը պայմանավորված է՝ • Վարկի նպատակից, • Հաճախորդի կողմից առաջարկվող վարկի ապահովվածությունից, • ՀՀ կենտրոնական բանկի կողմից և միջազգային պայմանագրերով սահմանված նորմատիվային դաշտի պահանջներից
Վարկ/գրավ հարաբերակցությունը	

Գրավադրվող դրամական միջոցների (պարտատոմսերի*) արժույթ	Վարկի արժույթ Տոկոսագումարները ամսական գանձելու պայմանով**			
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌԴ ռուբլի
ՀՀ դրամ	90%	-	-	-
ԱՄՆ դոլար	50%	90%	-	-
Եվրո	50%	-	90%	-
ՌԴ ռուբլի	-	-	-	90%

Գրավադրվող դրամական	Վարկի արժույթ Տոկոսագումարները նախօրոք գանձելու պայմանով***

	<table><tr><td>միջոցների արժույթ</td><td>ՀՀ դրամ</td><td>ԱՄՆ դոլար</td><td>Եվրո</td><td>ՌԴ ռուբլի</td></tr><tr><td>ՀՀ դրամ</td><td>95%</td><td>-</td><td>-</td><td>-</td></tr><tr><td>ԱՄՆ դոլար</td><td>55%</td><td>95%</td><td>-</td><td>-</td></tr><tr><td>Եվրո</td><td>55%</td><td>-</td><td>95%</td><td>-</td></tr><tr><td>ՌԴ ռուբլի</td><td>-</td><td>-</td><td>-</td><td>95%</td></tr></table> վարկային գծի տրամադրման դեպքում չի գործում տոկոսագումարները նախօրոք գանձելու պայմանը:
Տարեկան տոկոսադրույքը	<table><tr><td rowspan="2">Գրավադրվող դրամական միջոցների արժույթ</td><td colspan="4">Վարկի արժույթ</td></tr><tr><td>ՀՀ դրամ</td><td>ԱՄՆ դոլար</td><td>Եվրո</td><td>ՌԴ ռուբլի</td></tr><tr><td colspan="5">Գրավադրվող դրամական միջոցի տոկոսադրույքին գումարած՝</td></tr><tr><td>ՀՀ դրամ</td><td>+4%</td><td>-</td><td>-</td><td>-</td></tr><tr><td>ԱՄՆ դոլար</td><td>+4%, min 14%</td><td>+4%</td><td>-</td><td>-</td></tr><tr><td>Եվրո</td><td>+4%, min 14%</td><td>-</td><td>+4%</td><td>-</td></tr><tr><td>ՌԴ ռուբլի</td><td>-</td><td>-</td><td>-</td><td>+4%</td></tr></table> **Փաստացի տոկոսադրույքը՝** ՀՀ դրամով վարկերի դեպքում՝ 7.23-16.08% Արտարժութային վարկերի դեպքում՝ 4.28-12.68%
Վարկի ժամկետը	1 ամսից մինչև ժամկետային ավանդի վերջնաժամկետը (վարկի մարման ժամկետը չի կարող գերազանցել ավանդի վերջնաժամկետին):
Կոմիսիոն վճար	Չի սահմանվում (Բանկային երաշխիքի դիմաց գանձել կոմիսիոն վճար՝ համաձայն Բանկի Սակագների և դրույքաչափերի:)
Չօգտագործված մասի նկատմամբ %	Մինչև 10.000.000 ՀՀ դրամ ներառյալ կամ համարժեք արտարժույթով Վարկային գծի դեպքում, վերջինիս չօգտագործված մասի նկատմամբ սահմանել 0% տարեկան տոկոսադրույք, իսկ նշված գումարը գերազանցող վարկային գծի դեպքում՝ 1% տարեկան տոկոսադրույք:
Կանխիկացման վճար	Համաձայն ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ Սակագների և Դրույքաչափերի
Մարումների հաճախականությունը և կարգը	Վարկի մայր գումարի մարումները կատարվում են ամսական կամ ժամկետի վերջում, Վարկի տոկոսների մարումները կատարվում են ամսական կամ նախապես:
Ապահովվածությունը	Բանկում ներդրված ժամկետային ավանդներ, հաճախորդի ընթացիկ հաշվին առկա դրամական միջոցներ
Տրամադրման եղանակը	Անկանխիկ (գումարը փոխանցվում է ընթացիկ հաշվին և կարող է կանխիկացվել)
Վարկի ձևակերպումն իրականացվում է	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի կողմից:
Որոշման և տրամադրման ժամանակահատվածը	Մինչև 2 աշխատանքային օր
Վարկառուի նկատմամբ պահանջները	• Ռեզիդենտ անհատ ձեռնարկատեր անձ • Ռեզիդենտ իրավաբանական անձ • Ով Բանկում ունի ժամկետային ավանդ և/կամ բանկային հաշիվ
Դրական որոշման հիմքերը	• Դրական վարկային պատմություն (առկայության դեպքում), • Ներկայացված փաստաթղթերի արժանահավատություն:
Բացասական որոշման հիմքերը	• Հաճախորդի բացասական վարկային պատմությունը, • Այլ պատճառներ, որոնք Բանկի գնահատմամբ կխոչընդոտեն վարկի մարմանը
Տույժեր	Պայմանագրով սահմանված ժամկետ/ներ/ում չվճարված գումարների (վարկ, տոկոս, այլ վճարներ) ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար սահմանվում է տույժ ժամկետանց գումարի 0.13 տոկոսի չափով (օրական):
Քաղվածքի տրամադրում	Մինչև 1 ամիս կատարված գործարքների վերաբերյալ՝ անվճար 1-ից մինչև 3 ամիս՝ 1.500 դրամ 3-ից մինչև 12 ամիս՝ 2.500 դրամ 12 ամսից ավել՝ 5.000 դրամ
Իրավաբանական անձանց կողմից ներկայացվող փաստաթղթերը	1. Պետ. ռեգիստրի վկայականը (պատճեն) տնօրենի ներդիրը պարտադիր է կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք (տվյալ

	փաստաթուղթը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով), 2. Տեղեկանք պետ. ռեգիստրից մասնակիցների վերաբերյալ, տնօրենի և կանոնադրության փոփոխության վերաբերյալ կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք (տվյալ փաստաթուղթը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով): Բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ տեղեկանք (քաղվածք) «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ կանոնների համաձայն՝ հաշվի օպերատոր հանդիսացող կազմակերպությունից բաժնետերերի վերաբերյալ և տեղեկանք պետ. ռեգիստրից տնօրենի և կանոնադրության փոփոխության վերաբերյալ կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք (պետական ռեգիստրի տեղեկանքը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով), 2.կետով սահմանված տեղեկատվությունը չի պահանջվում այն իրավաբանական անձանց դեպքում, երբ վարկի ստացման որոշումը իրավաբանական անձի կանոնադրության համաձայն կարող է կայացվել տնօրենի կողմից, 3. Կանոնադրություն (վերագրանցված) քաղվածք (տվյալ փաստաթուղթը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով), 4. Իրավասու մարմնի որոշումը գրավ դնելու և վարկ ստանալու վերաբերյալ, անհրաժեշտ է 2-րդ կետով սահմանված տեղեկատվությունը պահանջվելու դեպքում, 5. Ֆինանսական հաշվետվությունների փաթեթ՝ վերջին հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ: Անհրաժեշտության դեպքում հաստատված (կնքված կամ դրոշմակնքված) համապատասխան հարկային մարմնի կողմից (պատճեն), 6. Տեղեկանք բյուջեի հանդեպ ներկա պարտավորությունների վերաբերյալ (պարտադիր է՝ 10 մլն. ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթի գումարից ավելի վարկի դեպքում), 7. Հարկային կոդ (պատճեն), ՀՎՀՀ, 8. Արտոնագրեր (առկայության դեպքում), (պատճեն), 9. Անձնագրի (պատճեն), 10. Բանկային հաշվից քաղվածք (անհրաժեշտության դեպքում), 11. Տեղեկանք դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում վերծանված): 12. Ըստ անհրաժեշտության այլ փաստաթղթեր:
Անհատ ձեռներեցների կողմից ներկայացվող փաստաթղթերը	1. Պետ. ռեգիստրի վկայականը (պատճեն) տնօրենի ներդիրը պարտադիր է կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք (տվյալ փաստաթուղթը կարող է չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով), 2. Հարկային կոդ (պատճեն), ՀՎՀՀ, 3. Ֆինանսական հաշվետվությունների փաթեթ՝ վերջին հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ: Անհրաժեշտության դեպքում հաստատված (կնքված կամ դրոշմակնքված) համապատասխան հարկային մարմնի կողմից (պատճեն), 4. Տեղեկանք բյուջեի հանդեպ ներկա պարտավորությունների վերաբերյալ (պարտադիր է՝ 10 մլն. ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթի գումարից ավելի վարկի դեպքում), 5. Արտոնագրեր (առկայության դեպքում), (պատճեն), 6. Անձնագրի (պատճեն), 7. Բանկային հաշվից քաղվածք (անհրաժեշտության դեպքում), 8. Տեղեկանք դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում վերծանված),

	9. Ըստ անհրաժեշտության այլ փաստաթղթեր:

* <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ կողմից թողարկված պարտատոմսերի գրավադրման համար կիրառել սույն որոշմանը կից Պարտատոմսերի գրավի թիվ 9.2 պայմանագրի տիպային ձևը:

** վարկային գծի գումարը ժամկետի վերջում մարելու պայմանով տրամադրված վարկային գծերի դեպքում՝ հաշվեգրված տոկոսագումարները 90-օրյա ժամկետում ամբողջությամբ վճարելու պայմանով

*** սույն կետը չի տարածվում վարկային գծերի վրա:

Ուշադրություն. Արտարժույթային դրամական միջոցների գրավադրմամբ ՀՀ դրամով տրամադրվող վարկի դեպքում հիմք է ընդունվում վարկի տրամադրման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված, արժութային շուկայում ձևավորված տվյալ արտարժույթի միջին փոխարժեքը:

Ուշադրություն.Վարկի վաղաժամկետ մարում թույլատրվում է, որի համար տույժեր և տուգանքներ չեն կիրառվում:

Ուշադրություն. Տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ:

Ուշադրություն: Վարկ ստանալու համար դիմելիս Բանկը Ձեզ տրամադրում է սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում ներկայացված է Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները:
(մինչև 5.000.000 ՀՀ դրամը ներառյալ կամ համարժեք արտարժույթով տրամադրվող վարկերի դեպքում)

Ուշադրություն: Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:

Ուշադրություն: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք է հանդիսացել 06.07.2021թ-ի դրությամբ ԿԲ-ի կողմից հրապարակված ԱՄՆ դոլարի (1USD = 495.59 AMD) և Եվրոյի (1 EUR = 586.68 AMD) փոխարժեքները: Տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել՝ կախված ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից:

Ուշադրություն. Վարկային գործառնությունների իրականացման շրջանակներում մատուցվող լրացուցիչ ծառայությունների սակագներին կարող եք ծանոթանալ անցնելով հետևյալ հղմամբ՝ https://aeb.am/media/2020/04/3717.pdf

ՀԱՇՎԻ ՇԱՐԺՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՎԱՐԿ/ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ

Վարկի նպատակը	Ձեռնարկատիրական գործունեության ընդլայնման և զարգացման համար
Վարկի տեսակը	Առևտրային
Վարկի արժույթը	ՀՀ դրամ և արտարժույթ /արտարժույթով վարկերի մարումների վրա կարող են ազդել փոխարժեքի տատանումները, որի ռիսկը կրում եք Դուք/
Վարկի գումարը	100.000-3.000.000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ, ընդ որում վարկի գումարը առավելագույնը կարող է կազմել Բանկում հաճախորդի հաշվարկային հաշվով վերջին տարվա (եթե հաշվի բացման ժամկետը մեկ տարուց պակաս է, ապա հաշվարկը կատարվում է տվյալ ժամանակահատվածի համար) կատարված շրջանառության առավելագույնը 30%-ի չափով, ընդ որում հաշվի շրջանառությունը հաշվարկելիս հաշվի չեն առնվում հաճախորդի հաշվին մուտքագրված վարկերի, փոխառությունների, ինչպես նաև պարտքային այլ բնույթի մուտքերը:
